ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի ՕՀԳ և կրիմինալիստիկայի ամբիոնի վերաբերյալ տեղեկություններ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի օպերատիվ-հետախուզական գործունեության և կրիմինալիստիկայի ամբիոնը ներկայիս հաստիքակազմով ձևավորվել է 2011 թվականին:

2012 թվականից ամբիոնը ղեկավարում է ոստիկանության գնդապետ Մանուկ Սեմերջյանը (էլ. փոստ՝ manuksemerghyan@mail.ru):

Ամբիոնի դոցենտների պաշտոնները զբաղեցնում են ոստիկանության գնդապետ Ալեքսանդր Սահակյանը և ոստիկանության փոխգնդապետ Բենիամին Ալեքսանյանը:

Ամբիոնի ավագ դասախոսների պաշտոնները զբաղեցնում են ոստիկանության փոխգնդապետ Վահագն Սարդարյանը և ոստիկանության փոխգնդապետ Հայկ Կուծանյանը:

Ամբիոնի դասախոսի պաշտոնը զբաղեցնում է ոստիկանության մայոր Լուսինե Սարդարյանը:

Ամբիոնի ուսումնական ասիստենտի պաշտոնը թափուր է:

Ամբիոնում համատեղման կարգով և պայմանագրային հիմունքներով դասավանդում են կրթահամալիրում և ոստիկանությունում ղեկավար պաշտոններ զբաղեցնող մասնագետներ:

Ամբիոնի գործունեության հիմնական ուղղություններն են կրթական, ուսումնամեթոդական և դաստիարակչական աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը, ամբիոնի գործունեության ուղղվածությանը համապատասխան գիտական հետազոտությունների իրականացումը, ամբիոնի ուղղվածության ուսումնական, ուսումնամեթոդական, ուսումնագործնական ձեռնարկներ, ուղեցույցներ և գիտաուսումնական այլ անհրաժեշտ նյութեր մշակելը, ամբիոնին կից գիտական խմբակի գործունեության կազմակերպումը, կրթահամալիրի կողմից իրականացվող կրթության որակի ապահովման քաղաքականության իրականացմանը նպաստելը:

2018-2019 ուսումնական տարում ամբիոնի դասախոսական անձնակազմը ղեկավարում է մագիստրատուրայի 15 սովորողների մագիստրոսական թեզերը:

2012-2018 թվականների ընթացքում ամբիոնի դասախոսական անձնակազմը հրատարակել է 6 ուսումնական, ուսումնամեթոդական, ուսումնագործնական ձեռնարկներ, 6 գիտական հոդվածներ:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի ՕՀԳ և կրիմինալիստիկայի ամբիոնում դասավանդվում են հետևյալ առարկաները՝

1. Մասնագիտական ներածություն և գաղտնիության ռեժիմ,
2. Գործավարության հիմունքներ և գաղտնիության ռեժիմ,
3. Օպերատիվ-հետախուզական գործունեություն,
4. Օպերատիվ-հետախուզական գործունեության հիմունքներ,
5. Օպերատիվ-հետախուզական գործունեության կարգավորման հիմնախնդիրները ՀՀ-ում,
6. Մինչդատական վարույթի օպերատիվ-հետախուզական ուղեկցման հիմնախնդիրները ՀՀ-ում,
7. Կրիմինալիստիկա,

8. Կրիմինալիստիկական մարտավարություն և տեխնոլոգիա,
9. Դատական բժշկություն և դատական հոգեբուժություն,
10. Դատական բժշկություն,
11. Դատական հոգեբուժություն,
12. Դատական հետքաբանություն,
13. Դատական փորձաքննություն,
14. Փորձագիտական ոլորտի դատաիրավական կարգավորումը,
15. Դեպքի վայրի զննություն,
16. Անչափահասների կողմից կատարվող իրավախախտումների պրոֆիլակտիկա: